

րից արժանաւորագոյնի ձեռքը յանձնէ ժողովուրդը իր ամենից նուիրական հաստատութիւնը:

* *

Պակաս անմխիթար չէ և մեր տաճկահայ և պարսկահայ եղբայրների վիճակը: Երկու սահմանադրական երկրներու մէջ էլ հայերի հրճուանքին սահման չկար. սակայն երկու տեղ էլ հայերի վիճակն աւելի վատթարացաւ, քան առաջ էր: Տաճկաստանում հայերի դէմ հալածանքը, կեանքի և գոյքի անապահովութիւնը, կանանց և աղջկանց անպաշտպան վիճակը բարբարոսների վայրենի կրքերի դէմ, կրօնական անհամբերողութիւնը, հոգեորոնների սանձարձակութիւնը, պաշտօնեանների թշնամական վերաբերմունքը դէպի դարաւոր տանջուած հայ ժողովուրդը, սխտեմատիք կոտորածները և ընդհանուր կոտորածի երկիւղը երկու ծայրայեղ միջոցների են ստիպել դիմել հայ ժողովրդին—անիծեալ և կորստաբեր գաղթին և ոչ պակաս կորստաբեր հայ ժողովրդի նամար՝ կրօնափոխութեան: Կ. Պօլսի հայ թերթերը վերջերս գլոսեցին, որ Չարսանճագի, մի ամբողջ թեմի հայ ժողովուրդ դիմել են ոռուսաց հիւպատոսին և խնդրել, որ իրանց ընդունեն յոյն եկեղեցու գիրկը, որպէսզի վախճան զրուի իրանց անտանելի կացութեան, ընտրել են չարիքի փոքրագոյնը, որ մարմինը փրկելու համար միայն հողին կորցնեն, փոխանակ այժմեան նման հողին և մարմինը միանգամայն կորցնելու: Չարսանճագի առաջնորդը հեռագիրներով զեկուցել է այս ծանր դիպուածի մասին Կ. Պօլսի պատրիարքաբանին. չգիտենք սակայն ժամանակ և սիրտ ունի՞ այդ ժողովը մի ամբողջ ժողովրդի կորչելու մասին մտածելու...

* *

Իսկ Պարսկահայերի վիճակը մաղիցն է կախուած. Պարսից կառավարութեան դիմումը Թաւրիզի հայոց առաջնորդին, որպէս զի Պարսկաստանի Հայերը չեզոք պահեն իրանց և չխառնուեն քաղաքական հարցերին, մի վտանգաւոր սպառնալիք է նրանց. պարսկահայերի կոտորածը անխուսափելի կլինի, եթէ նրանք չզսպեն իրանց եռանդը և խոհեմութեան շաւղի մէջ չպահեն իրանց:

* *

Ժողովրդական այս աղէտալի շրջանի մէջ եթէ մի փայլուն կէտ կայ՝ այդ գրականութիւնն է. չի կարելի ասել, թէ Կովկասում կամ Տաճկաստանում հրատարակուող գրքերի մէջ երևան են գալիս գլուխ գործոցներ և տաղանդներ է որ ասպարէզ են գալիս ամեն կողմից. բայց մի բան գոնէ մխիթարական է, այդ այն է, որ հայերէն լեզուով հրատարակութիւնների թիւը բազմապատ-